

MOSES KHORENATS'I, *History of the Armenians*. Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson. Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, England, 1978.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմություն Հայոց, անգլերեն թարգմանություն
և ծանոթագրություններ Ռուբեն Թումանի, Հարվարդի համալսարանի հրա-
տարակցություն, 1978:

հորինեացդհազիտությունը հայագիտական ուսումնասիրությունների շուրջ երեքհարյուրամյա պատմություն ունեցող կարևորագույն ընթացվածներից մեկն է՝ ճշշայտց պատմության առաջին հնդտասարկությունն իրականացվել է դեռևս 1695 թ. Վնեստիկում, անմիջապես իր վրա սեեեևելով եվրոպացի արևելագետների ուշադրությունը, ևնցած հայությունների ընթացքում հորինեացու երկի հայերեն ընթացիկ, ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, իսկզմանելով աշխարհաբարի, ֆրանսերենի, լատիներենի, գերմաներենի, ռուսերենի և իտալերենի Այս փաստն ինքնին արդեն պերճաբուս վկայություն է այդ հնամյա հուշարձանի պատմամշակութային անգնահատելի արժեքի։ Պատմության ուսումնասիրությունը, սակայն, ժամանակի ընթացքում վերհաննց մի շարք հակասություններ, որոնք որոշ հետադետողների հիմք տվեցին կասկածելու հորինեացու Վ դարի հնդիսակ լինելու իրողության և նրա գործի արժանահավատության վրա։ Ուսումնասիրողներից մի քանիսն երկան այնպիսի ծայրահեղության մեջ, որ լիովին բացասեցին ճշշայտց պատմության արժեքը՝ նրա հնդիսակե հնամարկով կեղծաբար։ Այս տեսակետակցողությունային հակահարված ստացավ բանասերների կողմից։

հորենացիագիտության վերջին շրջանի նվա-
ճումներից պետք է համարել հատկապես
Գ. Սարգսյանի «Մովսես հորենացու՝ ճշարտ
պատմության» ժամանակագրական համակար-
գը և ճշկլկնիտական դարաշրջանի Հայաս-
տանի և Մովսես հորենացիի աշխատություն-
ները։ Այսօր 1960-ական թթ. հորենացու
«Պատմության» նկատմամբ որոշ հետաքրքրու-
թյուն է նկատվում նաև արտասահմանցի հա-
յագետների շրջանակներում, որի մի նոր ար-
տահայտություն է Ռ. Թոմսոնի զբախուսվող
աշխատությունը։

Ռ. Թոմսոնը արդի հայագիտության ընդմահվոր մշակելիքից մեկն է։ Բանասերներին ծանոթ են նրա ծանրակշիռ ուսումնասիրությունները՝ նվիրված կաթնանեղոսի Պատմությանը հայերեն ընագրին, Հատկապես մեծ արժեք է ներկայացնում Պատմությանը երկրորդ գրքին՝ Վարդապետությանը նվիրված աշխատությունը, որը լույս տեսավ 1970 թ.2, Այն ընդգրկում է կաթնանեղոսի երկի 259—715 գլուխներին անցնելուն թաղամասնությունը՝ հանգամանալից բանասիրական ծանոթագրություններով, որոնցում հետոքեն վեր են հանված կաթնանեղոսի հայրաբանական դրակությունյան անուշությունները։ Ընթերցողներին ավելի լայն շրջանակներին համար է նախատեսված Ռ. Թոմսոնի մյուս աշխատությունը, որն ընդգրկում է կաթնանեղոսի երկասիրության պատմական մասերի մասաջին է երրորդ գրքերին անցնելուն թաղամասնությունը՝ հանգիպարող հայերեն ընագրով, Հայ ընթերցողները ծանոթ են նաև Ռ. Թոմսոնի Վարդապետությունը Արևմտագրում արժեքավոր մատենագիտական հոդվածաշարին, որը լույս է տեսնում Պատմաբանական հանդեսին՝ Երևանում սկսած 1969 թ.4։

Խորենացու «Պատմությանը» նվիրված սույն հրատարակությամբ Ռ. Խոմսոնը նոր ավանդ

² The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary by Robert W. Thomson. Harvard University Press. Cambridge, Massachusetts, 1970. ՏԻՄ ԻԼ. ՏԻՐ-ՂԵՆՈՂՅԱՆԻ զԲԱԽՈՍԵՂՅԱՆԻՐ «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 266—267.

³ Agathangelos, History of the Armenians, Translation and Commentary by R. W. Thomson, Albany, State University of New York Press, 1976. *Տե՛ս ն. Տեր-Ղևոնդյանի զրախոսությունը՝ «Պատմա-քա-նասիրական հանդես», 1977, № 4, էջ 240—242.*

⁴ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2. 1970, № 1. 1971, № 2. 1972, № 2. 1973, № 1. 1974, № 4. 1975, № 4. 1976, № 2. 1978, № 2. 1979, № 3:

1 Գ. Ուրգսյան, Մոլդևա հորենացու
«Հայոց պատմության» ժամանակագրական հա-
մակարգը. Երևան, 1965: Ն ու յ ն ի՝ Հիւն-
նիստական դարաշրջանի Հայաստանը և Մոլ-
սես հորենացին, Երևան, 1966:

է մուծում հայագիտության զարգացման զոր-
ծում: Աշխատությունը ռազկացած է հետևյալ
մասերից. «Առաջարան» (էջ VII—VIII), «Նե-
րածություն» (1—61), հորեհնացու երկի անգլի-
երեն թարգմանություն՝ տոգատակային ծանո-
թագրություններով (65—354), «Հավելված»՝
Սերեոսի «Պատմություն» առաջին երկու գլուխ-
ների և Մամիկոնյան տոհմի ծագմանը վերա-
բերող հատվածի⁵ անգլիերեն թարգմանություն
(357—368), «Հեռագրերի ցանկ» (369—370),
«Մատենագիտություն» (371—386), «Հատուկ
անունների ցանկ» (387—404), «Աստվածա-
շնչական վկայակոչումների ցանկ» (405—408),
«Հայաստանի քաղաքից ըստ հորեհնացու տվյալ-
ների» (410—411):

Գրախոսվող աշխատությունը մեծ արժեք է ներկայացնում հատկապես այն տեսակետից, որ Հանրիսանում է առաջին օտարալեզու թարգմանությունը՝ կատարված Մովսես Խորենացու Պատմության քինական ընդգրի հիման վրա^Ը։ Թմանոնն այսպիսով զգալի ծառայություն է մատուցել Հայերենին լսիրապետող գիտնականներին՝ նրանց տրամաբանության տակ դնելով մի ճշգրտված և վստահելի սկզբնական տեղ։ Տողապատի պատմաբանասիրական ծանոթագրությունները, որոնցում ուշադրություն է հատկացված գլխավորապես բնագրական առնչակցության հարցերին, նույնպես կարևոր ավանդ են խորենացու Պատմության համակողմանի լուսաբանման գործում։

Գրքի ընդարձակ սենթածության մեջ, քննության առարկա է դարձել հորենացու գրավոր աղբյուրների բացահայտման հարցը, Այստեղ է. Թոմսոնը նպատակահամար է համարել սահմանափակվել միայն նշված հարցի քննության հիմքի՝ դիտելով այն որպես վստահելի և ինքնուհուրեղ հորենացու Պատմության թվագրման և նրա պատմական արժեքի գնահատման համար: Մի քանի այլ խնդիրներ թուուցիկ կերպով շոշափված են ընթերցողության հետևյալ ենթադրույան ներքո. Շեյնս մասնագիտիների վկայությունները Մովսեսի մասին» (էջ 2—7), և վկայողությի

5 ՏՆ՝ս ճերեսի կախկույտի Պատմութիւնս, աշխատութիւնք Ստ. Մայիսայանցի, Երևան, 1939, էջ 1—13. Բ. Թոմսոնը թարգմանել է Թիֆլիսի 1913 թ. Հրատարակութիւն Տիմանկրա. տե՛ս «Պատմութիւն Սերէնի կախկույտի»-ի Հերակլէս, Թիֆլիս, 1913, էջ 1—16, 18—20.

6 Տե՛ս «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», աշխատությամբ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913:

⁷ Sh'u Moses Khorenats'i, *History...*, 498.

ասանուժք» (7—8, Վերաբերում է հորհնացու ժամանակի խնդրին), «Մովսեսի վերաբերմունքը պատմագրության նկատմամբ» (8—10) և «Մովսեսի Պատմության նպատակը» (56—61),

«Ներթափանցող» միացած մասն ամբողջությամբ նվիրված է հորինացու աղբյուրների քննությանը (10—56)։ Հիմնվելով նախորդ ուսումնասիրողների տվյալների վրա՝ Ռ. Թոմսոնը համառոտ ներկայացնում է բոլոր այն գրական հուշարձանները, որոնք նրա կարծիքով աղբյուր են ծառայել հորինացու «Պատմության» համար։ Դրանք են. Աստվածաշունչը, Մայալայի ժամանակագրությունը, Կեմո Կայլ-Մայկենիսի «Աղերսանքների պատմություն», Հովսեփոս Փարիոսի «Հերակլան պատերազմը» աշխատությունը. Փիլոն Աղերսահղաքացու ճանոթը, Եվսերիոս Կեսարացու «Եվկղեցական պատմությունը» և «Քրոնիկոնը», Սոկրատեսի «Եվկղեցական պատմությունը» և նրան կցված «Աղերսաորոսի վարքը», Գրիգոր Նաղաղագացու ճանոթը, Դերմոսյայի «Քաղեոս առաքյալի վարդապետությունը», Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Ղազար Փարպեցու «Պատմությունները», Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, «Աշխարհացույցը», Անանունի «Մասինեանի պատմությունը» (Սերետի «Պատմություն» առաջին կրկու գլուխները), ինչպես նաև՝ «Ջատկական ժամանակագրությունը», «Սիրիլյան գուշակությունը», Թեոնի «Ծաղազ» ճարտասանական կրկնիկնանց երկը, Նոնեսոսի «Ժողովարանի սկիզբներն...» (Scholia) վերնագիրը կրող աշխատությունը և «Պոտոլից գիրքը»։

Գրականության այս համառոտ տեսության հիման վրա Ռ. Քոմստոնն անվիճելի է համարում այն վիստոսը, որ հորեննացիին օգտագործել է որոշ հայերեն աղբյուրներ, որոնք ստեղծվել կամ թարգմանվել են V դարից հետո: Դրան պոմարելով նաև հորեննացու երկի մի քանի պատմական հակասությունները՝ Ռ. Քոմստոնը միանում է այն հետազոտողներին, որոնց կարծիքով «Հայոց պատմությունը» ստեղծվել է VIII դարի երկրորդ կեսում: Պատմա-ժամանակագրական այդ հակասությունները, որոնք ներկայացվում են ստորև, Ռ. Քոմստոնը պատրաստի վիճակում բաղել է 4. Քոմստոնիթթ՝

ա. Խորենացիի առաջին հայկական աղբյուրն է, որ Սյունիքի կողքին հիշատակում է Սիսական անունը՝ վկայված նաև Զաքարիա Հոստորի VI դարի ժամանակագրության ասորական բնագրում՝ ժախջահոցյ վյըը նույնպես հիշում է Սիսականը, բայց նաև նրա պես Սյունիքը։

⁸ *Sh'u* Cyrill Toumanoff, On the date of Pseudo-Moses of Chorene, *Հանդես ամսորյա*, 1961, էջ 467—476.

նիքի հոմանիշ, այլ որպես Արցախի գավառներից մեկը:

բ. Խորենացին տեղյակ է Բյուզանդական Հայաստանի շորս նահանգի բաժանման իրողությանը, որը, ինչպես հայտնի է, եղել էր 536 թ. Հուստինիանոս կայսեր նախաձեռնությամբ:

գ. Վանա լճից արևելք ընկած երկրամասը Խորենացին կոչում է Վասպուրական, մի անվանում, որ գործածության մեջ է մտել միայն Հայաստանի 591 թ. բաժանումից հետո:

դ. Խորենացին հիշատակում է խազարների անունը, որը վկայակոչված չէ որևէ այլ աղբյուրում, բացի VII դարի «Աշխարհացույցից»:

ե. Խորենացին տեղյակ է Բյութանիայի պարսկական նվաճման փաստին, իսկ հայտնի է, որ դեպի արևմուտք այդպիսի առաջխաղացում պարսիկները կատարել են միայն 604—629 թթ. միջև ընկած ժամանակահատվածում:

զ. Խորենացու «Պատմության» երրորդ գրքի 46-րդ գլխում տեղեկություն կա այն մասին, որ Բյուզանդական Հայաստանում «նախարարաց առաջնորդների» և «կոմես իշխանների» երկիշխանություն գոյություն ուներ, որը արտացոլում է 629 թ. պարսիկների նկատմամբ Հերակլիոս կայսեր տարած հաղթանակից հետո ստեղծված իրավիճակի:

է. Խորենացու ընդգծված ատելությունը Մամիկոնյանների նկատմամբ և, ընդհակառակն, Բագրատունիների հանդեպ ցուցաբերած անսահման համակրանքը ապացույց են այն բանի, որ նրա «Պատմությունը» գրվել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ այդ երկու նախարարական տների քաղաքական պայքարից հաղթող էին դուրս եկել Բագրատունիները: Դա պատշաճում է 771—772 թթ. ապստամբությունից⁹ հետո ստեղծված իրադրությանը, երբ Մամիկոնյանները փաստորեն լիովին կորցրել էին իրենց քաղաքական ազդեցությունը:

Նշված փաստարկների քննությունը դուրս է սույն գրախոսության ծրագրից: Այդուհանդերձ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել մի էական խնդրի վրա: Խորենացու ժամանակի հարցը գիտական հարց է, և ամեն մի հետազոտող իրավունք ունի նրան մոտենալու իր տրամաբանության թելադրանքով, սակայն առանց ոտնահարելու գիտական սկզբունքայնության և բարեխղճության պահանջները: Դժբախտաբար Ռ. Թոմսոնի «Ներածության» մեջ զարմանալի համառությամբ կրկնվել են Խորենացու նախորդ քննադատների բոլոր ծայրահե-

ղությունները, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ երեքը.

1. Երբ Խորենացու «Պատմությունը» որևէ դրվագում համընկնում է մի ուրիշ գրավոր հուշարձանի, գա համարվում է անառարկելի ապացույց այն բանի, որ Խորենացին օգտվել է նրանից: Հակառակ ազդեցության կամ թեկուզ ընդհանուր աղբյուրի օգտագործման հնարավորությունը լիովին բացառվում է:

2. Երբ Խորենացին հաղորդում է մի այնպիսի տեղեկություն, որը հայտնի չէ որևէ այլ աղբյուրից, դա նշանակում է, որ նա խարդախում է: Զխոսելով այն մասին, թե որքան անհեթեթ է նման դատողությունը, քանի որ ղեկավարվելով դրանով՝ պետք է սուտ համարել անցյալի բոլոր պատմական աղբյուրների եզակի վկայությունները, նշենք միայն, որ հեղինակի կողմից զարմանալիորեն մոռացության են տրվել Խորենացիագիտության դառը դասերը: Այսպես, օրինակ, ինչպես հայտնի է, Հայոց Արտաշես I թագավորի (մ. թ. ա. 189—մոտ 160 թթ.) հողային բարեփոխումների և այդ առթիվ կանգնեցված վիմագիր սահմանաքարերի մասին միակ վկայությունը մինչև վերջերս մնում էր Խորենացու «Պատմությունը»՝ համարվելով նրա հերթական ստեղծված մեկը¹⁰: Սակայն ի հիասթափություն Խորենացու քննադատների՝ միայն Սովետական Հայաստանի տարածքում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հայտնաբերվեցին Արտաշեսի անունը կրող մոտ տասը արամեական արձանագրություններ, որոնք լիովին հաստատեցին Պատմահոր վկայությունը: Նման զգաստացուցիչ փաստը պետք է հետադոտողներին հիշեցնի, որ Խորենացուց դեռևս շատ անակնկալներ կարելի է սպասել:

3. Ռ. Թոմսոնի մոտ բացասելու կիրքը հասել է մի այնպիսի աստիճանի, որ գիտակցաբար, թե ոչ, անվանարկում է Խորենացուն¹¹:

Այսպիսով, Ռ. Թոմսոնի ներածական ուսումնասիրությունը ոչ միայն ոչինչ չի ավելացնում Խորենացիագիտության վրա, այլև նորից առաջ է քաշում վաղուց արդեն մերժված տեսակետներ: Ինչ վերաբերում է բուն թարգմանությանը, ապա այն նշանակալից ներդրում է հայագիտության ասպարեզում և մենք չենք կարող չհայտնել մեր անկեղծ երախտագիտությունը հարգարժան հեղինակին:

Բանասիր. գիտ. քեկնածու

Լ. Զ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

⁹ Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ այդ ապստամբությունը տեղի է ունեցել 774—775 թթ., տե՛ս А. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, էջ 105—110:

¹⁰ Տե՛ս Г. Халатянц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, часть I: Исследование, М., 1896, էջ 278:

¹¹ Moses Khorenats'i, History..., էջ 58: